



Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

(Դոցենտ, Գերագույն
Հոգևոր Խորհրդի անդամ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԺԴ—ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ



ողովուրդների զանգվածային արտագաղթն ունենում է ընդհանրապես երկու հիմնական պատճառ՝ քաղաքական և տնտեսական։ Սակայն հայ ժողովրդի արտագաղթերը բացատրվում են գլխավորապես քաղաքական պատճառներով։ Դեռևս ժ դարի երկրորդ կեսից սկսած և մանավանդ ժամանակական հայության նվաճողական ոտնձգությունների հետևանքով՝ զանգվածային մի աննախընթաց արտագաղթ է սկսվում Հայաստանից դեպի Փոքր Ասիա (գլխավորապես դեպի Կապադովիա), Միջազգետք և Կիլիկիա։

Այս արտագաղթի մանրամասնությունները դուրս են մնում մեր նյութից։

ԺԱ դարի վերջին քառորդին Կիլիկիայում, Տավրոսյան լեռների բարձումքների վրա, հիմնվում է Հայկական մի փոքրիկ պետություն, որի հշանանոթյան ամրացման և երկրի ընդարձակման գործում փոքր դեր չեն կատարում վերոհիշյալ դարերում Հայաստանից դեպի Փոքր Ասիա և Հյուսիսային Միջազգետք գաղթած Հայկական զանգվածները, որոնց մի մասը Կիլիկիա անցնելով, ուժի զացնում է Հայ տարրը այս նորաստեղծ Հայկական պետության մեջ։ Վերջինս լրիվ 100 տարվա համառ պայտարներից հետո ընդարձակվելով՝ հասնում է Միջերկրականի ափե-

րը, վերջնականապես գրավելով Դաշտային Կիլիկիան և կազմելով Հայկական մի անկախ պետություն։

Իր ծովային ու ցամաքային աշխարհագրական բարենպաստ դիրքով, ինչպես նաև կեռն Բ-ի և նրա հաջորդների վարած տնտեսական քաղաքականության հետևանքով, Հայկական Կիլիկիան պետությունը ժարի երկրորդ կեսից մինչև ժԴ դարի կեսերը հասնում է տնտեսական աննախընթաց բարգավաճման, և այս առաջին հերթին շնորհվել իր միջազգային առևտրին, որի հանգույցներն էր Հանդիսանում Կիլիկիան։

Եկ ահա, այս երկրի իրադարձություններն ու մանավանդ նրա տնտեսական զործառնությունները բազմաթիվ երկրների ու ժողովուրդների հետ ուսումնասիրողը չի կարող շասնել մի կետի¹, երբ նա ստիպված կինքի իրեն հարց տալ այն մասին², որ եթե Հայկական Կիլիկիան իր բազմաթիվ քաղաքներում ընդունել է օտար ժողովուրդների բազմություններ, սրանց տալով առևտրական ու արհեստագործական բազում արտոնությունները գալու համար անհնարինություն է առաջանալ։

¹ Այս մասին մենք ունենք ընդարձակ մի անտիպ աշխատություն՝ «Հայկական Կիլիկիայի տնտեսական հարաբերությունները Զենովյայի և Վենետիկի ռեսպուբլիկաների հետ ժԴ—ժԴ դարերում» վերագրով։

² Բացի Հ. Դ. Ալշանից, այս հարցադրությամբ չեն դաշտվել Հայկական Կիլիկիայի մասին արժեքավոր ուսումնասիրություններ գրած հեղինակներից ոչ մեկը

ներ, ապա ինչպես կարող էր պատահել, որ հայ ձեռներոց առևտրականներ ու արհեստավորներ շահատավորվելին, օրինակ, Խոտիկայի վկանը շահատավորում (այս հոգվածում մենք այլայլ քաղաքներում (այս հոգվածում մենք կ նկատի ունենք միայն այս երկիրը), զբաղվելու համար դեպի իրենց Մալրենի երկիրը մենող և այստեղից եկող առևտրով, ինչպես նաև արհեստներով:

Հայկական Կիլիկիայի մեր ժողովրդի առևտրական ձեռներոցության մի այլ քայլը հենց նույն ժամանակաշրջանում մենք վերջնականապես ապացուցեցինք այս հանդեսի նախկին համարներից մեկում³, ցուց տալով, որ Կիլիկիայի հայ ժողովուրդն էլ ունեցել է իր առևտրական նախատորմիղը, որով նա ժամանակցել է իր ժամանակի միջազգակի ծովալին առևտրին:

Հետեւարար, երբ Խոտիկայում հաստատված հայկական գաղթականությունների հարց է դրվում ԺԳ—ԺԴ դարերի համար, ապա այդ ինքնին վերաբերում է Կիլիկյան Հայկական պետությունից մեկնած և Խոտիկայում հաստատված հայկական համարներին, որոնց գոյության մասին պաշտոնական տվյալների պրատման և լուս աշխարհ՝ հանելու խնդիրը առաջին չերթին նույնպես պարտական ենք Հ. Պ. Ալիշանի անխոնց շանասիրության: Հ. Պ. Ալիշանը իր «Սիսուան», «Սիսական», ինչպես նաև «Հայկական» աշխատություններում հավաքի է հայալիայում հաստատված հայկական գաղթականությունների ու եկեղեցիների մասին որոշ նյութերը նա այդ գաղթականությունների հաստատումը վերաբերում է քաղաքական և ոլոտեական պատճառների:

Հայկական Կիլիկիայից արտագաղթի քարարական պատճառները կային անշուշտ, դեռևս Լևոն Բ.-ի անմիջական հաջորդների ժամանակներից: Այսպես Հեթում Ա.-ի թագավորության 44 տարիների (1226—1270 թ. թ.) վերջին երկու տասնամյակներում հեկոնիայի առվանդությամ և գլխավորապես եղիպասոսի մամլուքների անընդհատ արշավանքները Հայկական Կիլիկիան հաճախ վերածում էին պատերազմի դաշտի: Երկրին սպառնացող վատանգի առաջ Հեթում Ա.-ը անհրաժեշտ գոտավ փոխի Հայկական Կիլիկիայի արտաքին քաղաքականությունը: Նա մինչև Կարակորում մնաց և ներկայացավ թաթարների Մանգու խանին, կնքեց սրա հետ դաշնագիր երկու կողմերի ընդհանուր թշնամի հանդիսացող մամլուքների դեմ: Հեթումի հաջորդի՝ Լևոն Գ.-ի իշխանության տարին էլ (1270—1289 թ. թ.) անցան ներքին ու արտաքին կոփաներով: Այս թագավորի

³ Տե՛ս այս մասին մեր «Կիլիկյան Հայկական պետության սփառական նախատորմի ունենալու հարցը» հոդվածը, «Եղմանձին», 1957 թ., № 2.

օրով Հայկական Կիլիկիան, մամլուքների հետ կնքված հաշտության պայմանագրի համաձայն, հանձնառու է լինում, բացի նյութական այլ հատուցումներից, դրամական մեծ տոպանի վճարել տասը տարի շարունակ: Լևոն Գ.-ի հաջորդի՝ Հեթում Բ.-ի ժամանակ՝ լեռն Գ-ի հաջորդի՝ Հեթում Բ.-ի ժամանակ վատիթար դրությունն ստիպում է նրան իր պապի՝ Հեթում Ա.-ի քաղաքական ուղղությունը բռնկել, և նա ձեռք է բերում, թաթարների օգնությամբ, որով հաջորդություններ մամլուքների դեմ: Սրա հաջորդներից լեռն Դ և նույնիսկ իրենց բնական մասով չեն մեռնում, երկրի քաղաքական անսպաս պայմանները բերումով, երբ միաժամանակ Հայկական Կիլիկիան կորցնում է Այասը, որն ստիպված էր լեռն Ե-ը զիջել մամլուքներին, իրերկ հետևանք իր գինվորական պարտության: Իսկ Այասի կորուստը սկիզբն էր Հայկական Կիլիկիայի պետական քաղաքական անկախության վախճանի, որը շատ էլ հեռու չէր (1375 թ.):

Հայկական Կիլիկիայի քաղաքական այս աննպատ, անկայուն, նույնիսկ վտանգավոր պայմանները հանդիսացան պատճառները արտագաղթի Կիլիկիայից դեպի Խոտիկիա:

Մենք պատճառներ ունենք, սակայն, ենթագրելու, որ Հայկական գաղթականությունների Խոտիկիայի ավելի քան 30 քաղաքներում հաստատման գլխավոր շարժառիթը պետք է լինի տնտեսական նպատակների հետապնդումը: Որովհետև, հակառակ Հայկական Կիլիկիայի պետության ուղմաքառական իսկապես խիստ հեղհեղուկ պայմաններին, այդ երկրում նույն ժամանակներում զարգացել էր տնտեսական այնպիսի բազմաթեսակ ու բազմահարուստ մի կյանք, որի ճյուղավորումներն անցել էին այս փոքրիկ երկրի սահմաններից դուրս, դեպի շատ հեռաները, և առաջին հերթին՝ դեպի իտամիա:

Խոտիկայում ունեցել ենք հոծ գաղթականություն: Հ. Պ. Ալիշանն իր «Սիսուան»-ում (էջ 372) շուրջ 30 քաղաքներ է թվարկում Խոտիկայում, որտեղ եղել են Հայկական եկեղեցիներ, որոնց մեջ արարողությունները կատարվել են երկար ժամանակով հայ զաղային-եկեղեցական ծեսով ու լեզվով՝ «Թաւելք ազգային ծիսիւ և լեզուաւ», — ինչպես ասում է «Սիսուան»-ի հեղինակը: Բացի եկեղեցիներից, Խոտիկայում հաստատված հայերն ունեցել են նաև իրենց «Հոգետունները, «Հայ տուն»-երը, որոնք մասամբ եղել են «միաժամանակ» աղոթատուներ:

⁴ Հ. Պ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 456: — Տե՛ս նաև Մեսրոպ Վեդ, Ավագայան, «Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցոց հայոց», Վենետիկ, 1891 թ., էջ 51:

նրանք տևեցել են մինչև իսկ վանքերը Եղել են նույնիսկ քաղաքներ, ինչպես օրինակ Հռոմը, Վենետիկը, Բոլոնիան, որտեղ հայկական եկեղեցիների թիվը եղել է երկու կամ երեք⁵:

Ամենից առաջ մեր ուշադրությունը կենտրոնանում է այդ եկեղեցիների հիմնադրության թվականների վրա. դրանք հիմնվել են 1240—1372 տարիներին, այսինքն Հայկական Կիլիկիայի արտաքին առևտության գարգաման և Այսակ ամենածաղկած ժամանակաշրջանում: Հայկական Կիլիկիայի արտաքին առևտության անախընթաց ընդարձակումը գրլիսավորպես Խոտալիայում՝ պայմանավորվել է այս երկրի բազմաթիվ քաղաքներում հայ առևտուրականների և արհեստավորների հաստատումով, որոնք և ժամանակի ընթացքում շինել են բազմաթիվ եկեղեցիներ, կազմակերպվելով իրոք հայ համայնքներ:

Խոտալիայում հաստատված հայ համայնքներից համեմատարար ավելի Վենետիկի հայերի մասին է, որ Ալիշանը տալիս է մի շարք տեղեկություններ, որոնք ամփոփված են ի մասնավորի նրա «Հայ-Վենետո»-ում: Հայերը ժայի կեսերից Վենետիկում ունեցել են «Հայոց տուն», որը մինչև այսօր (1896 թ.) կոչվում է «Casa degli Armeni» առօնթեր փողոցը՝ «Calla degli Armeni», իսկ մերձակա կամուրջը՝ պատմական գրքերում՝ «Pons Armentorum seu Feralium»: «Հայ տուն»-ը նշանակում է հյուրանոց, իշխան, հավաքատեղի, բայց նաև այն ծառայել է, գոնե մի մասով, իրեւ եկեղեցի կամ աղոթատուն: Վենետիկում, Սերաստիան Շիանի անունով մի անձ 1253 թվականին իր տունը կտակում է հայոց, այդ տանը արդեն հայեր են բնակվելիս եղել: Այս կտակի մեջ ասված է, «Ճունն, ուր կենան հայք, կ'ուզենք որ մշտնջենաբար իրենց բնակարանն ըլլայ»: Մոտավորական այս սարիներում Վենետիկում մահանում է ծերոնի մի հայ, որը մի որոշ գոմար է կտակում «Հայոց տուն» պահպանման համար⁶: Այս «Հայոց տուն»-ը սակայն մինչ 1434 թվականը ծառայել է նաև իրեւ հայոց եկեղեցի կամ աղոթատուն, քանի որ այդ թվականին գրված մի հիշատակարանամասված է: «Ես Գորգս կու տամ պ. Յակոբին զայս Մեսարա, որ է պատարագատերը: Ով որ գայ ի Վինեժ, որ կամի պատարագ առնել, նա առնու և պատարագ առնէ ի Հայ տուն»⁷: Այնուհետև՝ Արմենա կամ Մարիամ անունով մի հայուհի 1344 թվականին Վենետիկում թողնում է մի կտակ, որին կտակակատարներ է նշանակում Վենետիկում

⁵ Հ. Պ. Ալիշան «Հայ-Վենետո», Վենետիկ, 1896 թ., էջ 143:

⁶ Նույն տեղում, էջ 147:

⁷ Նույն տեղում, էջ 180—181:

ապրող 8—10 հայերի: Նա իր կտակում մի որոշ գոմար է թողնում նաև հայոց արքեպիսկոպոսին: Ըստ Ալիշանի, այս հայոց արքեպիսկոպոսը նստում էր Վենետիկում կամ Խոտալիայի այլ քաղաքներից մեկում, որտեղ հայերը եկեղեցիներ ունեին⁸: Վենետիկում եղել է ու ապրել Թովմաս անունով մի հայ եպիսկոպոս, որն այս քաղաքից Կիլիկիայի Կոստանդին կաթողիկոսին (ըստ Ալիշանի՝ 1374—1381-ին կաթողիկոս եղած⁹), որություն է ուղարկել: Ուստի, Ալիշանը ենթադրում է, որ այս Թովմաս եպիսկոպոսը վերոհիշյալ Մարիամի կտակում հիշված հայոց արքեպիսկոպոսի հաջորդը եղած պետք է լինի¹⁰: Վենետիկում հիմնվում է հայոց երկու եկեղեցի, մինչ 1348 թվականին Ս. Հովհաննես Մկրտչի անունով, մյուսը՝ 1434-ին՝ Ս. Խաչը անունով¹¹: Եվ, վերջապես, 1343 թվականը կրող մի հաստատվայության համաձայն, «ի հնուց» հայկական գերեզմանատուն է եղել Վենետիկում¹², ինչ որ իրեն հավաստի ցուցմունք կածելի է համարել Վենետիկում հաստատված հայերի որոշ թվի մասին: Բայց ավելին կա: Ալիշանը բերում է հետեւյալ նշանակալից փասոր Վենետիկում հաստատված հայկական հոծ բազմության մասին: Նա Վենետիկի եկեղեցիների մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի մահացուցակներում հանդիպել է հազարից ավելի հայ անունների, բուն Վենետիկում կազմակերպում¹³: Հեղինակի այս հայունաբերումը խիստ կարևոր է դառնում Խոտալիայի հայկական գաղութների հարցում այն պատճառով, որ մյուս բազմաթիվ քաղաքների հայերի մասին գրեթե ոչ մի տեղեկություն գետ մինչև այսօր չի հայտնաբերված: Այս պետք է բացատրել ամենից առաջնորդությանը, որ այդ քաղաքների արխիվային ուսումնասիրություններ այս ուղղությամբ գետ չեն կատարվել:

Մենք վերևում հիշատակեցինք Թովմաս անունով մի հայ եպիսկոպոսի, որն ապրել է, ըստ Ալիշանի, Վենետիկում 1370-ական թվականներին: Այս եպիսկոպոսից շուրջ 60 տարի առաջ Վենետիկում հիշատակվում է մի այլ Թովմաս (Թումաս) եպիսկոպոս, որը

⁸ Նույն տեղում, էջ 143:

⁹ Ալիշանը շփոթության մեջ է ընկել, այս թվականները վերաբերելով Կոստանդին կաթողիկոսին: Այդ թվականին կաթողիկոս էր ո՞չ թե Կոստանդինը, այլ Պողոս Ա Սակելին, ինչպես այդ ցուցը է տալիս Օթմանլանը իր «Աղքաղաղատուն»-ում, թ մաս, Կոստանդնոպոլիսի, 1914 թ., էջ 1937, 1943 և 1953:

¹⁰ Հ. Պ. Ալիշան, նույն տեղում, էջ 157—161:

¹¹ Հ. Պ. Ալիշան, «Միսուան», Վենետիկ, 1885 թ., էջ 372:

¹² Հ. Պ. Ալիշան, «Հայ-Վենետո», էջ 153:

¹³ Նույն տեղում, էջ 163—164:

կրում է «Եպիսկոպոս Իրավիոյ» տիտղոսը: Այս մասին 1311 թվականին գրված և «Մայր Մաշտոց Սոոյ» վերտառությունը կրող ձևագրի հիշատակարանում, ի միջին այլուց ավելի հիշատակարանում, ի միջին այլուց ավելի հիշատակարանում, այսպատճեալ մագաղաթու ի վեհծու առ Կաթողիկոս Ամենայն Հայոց ի Տէր Կոստանդին, ի Թումասայ (գրված է «Թումասայ» ծանոթ, և Խաչիկյանի) եպիսկոպոսի Իրավիոյ¹³:

«Իրավիոյ եպիսկոպոս» Թումասի այս հիշատակությունը մասնավոր արժեք է ներկայացնում: Հայ եկեղեցական այս բարձր պաշտոնատարի Ներկայությունը Խոտիայում նշանակում է, թե նա ընդհանուր հոգ կողություն է ունեցել Խոտիայի բազմաթիվ հայկական եկեղեցիների և սրբանց շուրջը կազմակերպված համայնքների վրա՝ թեմակալ առաջնորդի հանգամանքով: Այս «Իրավիոյ եպիսկոպոս»՝ Կիլիկիայի Ամենայն Հայոց Կաթողիկոս Խոտանդինին ուղարկած ամագաղթի բովանդակությունը դժբախտարար Հայունին չէ: Այդ եպիսկոպոսից հետո հիշվում է Հայոց արքակիոպոսուր Վենետիկում, որին վերոնշյալ Մարիամ Հայունին որոց գումար է կտակում: այսուհետեւ՝ 1370-ական թվականներին Վենետիկում ապրում է մի այլ Թովմաս եպիսկոպոս, որին Ալիշանը շփոթում է 1311 թվականի Մայր Մաշտոցի հիշատակարանում նշված «Եպիսկոպոս Իրավիոյ» Թումասի հետո: Բարձրաստիճան այս Հայ հոգկորականների ներկայությունը ժողովարի 60 տարիների ընթացքում վենետիկում, նաև այլ երկու եպիսկոպոսների հիշատակությունը, ինչպես ներքեւում կտևսնենք, խոսում է այն մասին, թե Կիլիկիայի Կաթողիկոսների և նկատի են ունեցել Հայկական բազմաթիվ համայնքների գոյությունը Խոտիայում, նշանակելով բարձրաստիճան Ակեղեցականների մեջակալ առաջնորդի պաշտոններում:

Պատուհան չէր ո՞չ Վենետիկում հաստակած Հայկական բազմամարդ զաղութիքությունը, ո՞չ էլ Հայ եպիսկոպոսների ներկայությունը Վենետիկում: Վենետիկը,

13 Տե՛ս Լ. Խաչիկյան, «Հայերն ձևագրերի հիշատականներ», Երևան, 1950 թ., Հատ. Ա, հիշատակարան № 106:

Հիշատակարանում նշված Կիլիկիայի Ամենայն Հայոց Կաթողիկոս Կոստանդինը պետք է եղած մինչ Կոստանդին Գ Կոստանդին, որի գահակալության տարիները Օրմանյանը դնում է 1307—1322 թվականներն:— Տե՛ս «Աղդամատում», թ. մաս, էջ 1836:

Եթե Ալիշանի կողմից վերևում նշված Թովմաս եպիսկոպոսի վերաբերյալ թվականների շփոթության է հաստարել, ապա պիտի ենթագրել, որ այս երկու թովմաս կամ Թումաս եպիսկոպոսները նույն անձն եղած պետք է լինեն:

Զենովայի հետ, առևտրական ամենալայն հարաբերությունների մեջ էր Հայկական Կիլիկիայի հետ: Հասկանալի է միանգամայն Հայկական Կիլիկիայի մերտ կապը Վենետիկի հետ: Ալիշանը հիշատակում է Վենետիկի իշխանությանց բազմաթիվ դրական վկայությունները հայերի մասին, թե սրանք որպես օգտաբերք, երախտաւորք, հաւատարիմք, մտադիր մարդասիրութեան պաշտպանութեան, արգահաստութեան արժանառքը և այլն արձանանան դիւնի նոցին յժգ դարէ և այսր, ընդ ալլոցն ամբար բեալ և զմուրհակս և զպատճէնս գործոց և գործակալաց և հայոց»¹⁵:

Այս բոլոր վկայությունները հաստատում են երկու բան. առաջին՝ որ Վենետիկում հաստատված է եղել ժողովական համայնք, որը հաճախի իր գործին է ունեցել Հայ եպիսկոպոսները. երկրորդ՝ որ Հայկական գաղութների գոյությունը Խոտիայում բացատրվում է ամենից առաջ առևտրական նպատակներով, և ապա կյանքի և գուրքի ավելի ապահովվ վայր գոնելու ցանկության մեջ:

Զենովայում հաստատված Հայերը, ըստ Ալիշանի, Կիլիկիայից փափչաղներ են եղել, որոնք Փի վտանգի մեծապես աշխարհին Սիսուանայ, գագհի գաւաճանութեամբ թագաւրասպան թաթարին¹⁶, յամի 1307, խուսափողը յիրկրէ անտի Հայոց, նախ ի Գենուա հաստատեցին վանս, և եկեղեցի յանուն Ս. Բարդողիմայ (1308), յորմէ ապասփուցան և հաստատեցին վանորայք յամ և այլ քաղաքն մերձաւրս, և վանականք կողշեցան Հայ կղրաբերք¹⁷: Խոսքն այստեղ Հայ վանականների մասին է, որոնք, ըստ մի այլ հեղինակի, իրոք միանձնենք Սև լիոնների ճննարաններից ապաստան են գտնել Զենովայում¹⁸: Համենայն դեպս, երկու Ջեղինակների մտություն էլ պահասում են տիգելիկություններ Զենովայում, ինչպես և այլ քաղաքն մերձաւրս անպաշման գոյություն ունեցած Հայ համայնքների մասին:

Աղբականի ափին գտնվող Անգոնա նավահանգիստ-քաղաքում Հայոց բնակության

15 Հ. Ղ. Ալիշան, «Միսական», էջ 447:

16 Հ. Ղ. Ալիշանի ալուանարկը վերաբերում է Հետեւալին. Հայկական Կիլիկիայի Հայոց թագավոր Լեռն Դ-ը 1307 թվականին գափանանարար սպանվում է թաթարների մի պետի՝ Պիկարուի կողմից, որի հատկանի Կիլիկիայում ստեղծվում է քաղաքական մի գաղաքավոր շրջան:

17 Հ. Ղ. Ալիշան, «Միսական», էջ 449—450:

18 Մերուպ Վեդ. Ուրույան, «Պատմութիւն Հայոց գաղթականներին և շինութեան եկեղեցւոց Հայոց», էջ 242:

սկիզբն է դրվում Հեթում Ա-ի թագավորության շրջանում (1226—1270 թ. թ.): Հայերը քաղաքի պարիսպներից դուրս տեղ են ստանում և այնտեղ 1248 թվականին հիմնում իրենց Հոգհառունը «Ս. Հոգի» անունով, իսկ 1262-ին նրանց թույլ է տրվում կառուցել իրենց եկեղեցին: Ուղբանու Դ պատը հայ եկեղեցու կառուցման կապակցությամբ խմբագրված իր գրության մեջ Անգոնայի Հայերին անվանում է «աղքատներ» կամ պանդուստներ»: Միանգամայն ճիշտ է նկատում Ալիշանը, թե ուղեմն այս քաղաքի հայերը բաղկացած չեն եղել լոկ վանականներից, այլ որ նրանց հետ եղել են նաև աշխարհական հայ մարդիկ՝ «հաւատնօրին եկեղեց վաճառականութեան աղագաւ», — եղակացնում է նա, ավելացնելով, թե ինքը չի կասկածում, որ Կիլիկիայի հայ վաճառականները այս և հետեւալ՝ ժողովում հաճախել են ջենովա և Վենետիկ, ինչպես և Անգոնա: Այս քաղաքի մասին տարեգրություններ հավաքող Մաղաքիա դպիրը գրում է. «Ի յենգոնիա գոն բազում գերմանացարք հայ գրով փորագրեալք, որք երկին մինչև ցայսօր, որ եմք ՌՅՇ (1701 թ.)», թեև Ալիշանը հաստատել է, որ իր ժամանակ այդ քարերն ու հայոց հին հոգհուունը իսպառ անհայտացած են եղել¹⁹: Այս իհարկե շի ժխտում այն իրողությունը, թե Անգոնայում ժողովարի կեսերից հայ բնակչություն է ապրել: Մեսրոպ վարդապետ Ուղուռանը նույնիսկ մտավոր թիվ է ասում այս քաղաքի հայ բնակչության մասին՝ 150 ընտանիք²⁰:

Անդրնայից ոչ հեռու, դեպի հյուսիս գոնվող Քիմինի կամ Արիմինի ծովեղոյա քաղաքում: ևս հայերն ունեցել են իրենց Հոգհառունը, որտեղ 1254 թվականին Վարդապան անունով մի հայ քահանա բնողորդին անհայտացած են եղել²¹: Վարդան քահանան հիշատակում է ուրիշների շարքում նաև ուղարքելաշանորհ եպիսկոպոսն Յովանէս²²: Այս արդեն 4-րդ հայ եպիսկոպոսն է, որ հիշատակվում է Խտավայտում: Մըա պաշտոնի մասին ոչինչ չգիտենք: Հոգհառանից առաջանարար ժողովում առաջանա սկզբին, հայերն ունեցել են այս քաղաքում եկեղեցի՝ Ս. Մովհաննես և Ս. Մատթեոս ավետարա-

նիչների անունով: Քաղաքի դիվաններում հիշատակվում են 1311 թվականին նաև «Հայ եղարքո»²³: Այս անվամբ հիշատակություններ կան նաև իտալական այլ քաղաքների հայ միարանությունների մասին, օրինակ Ջենովայում, Սիենայում և այլուր:

Խտավայտում գրծող և պաշտոնավարող 5-րդ հայ եպիսկոպոսի մասին հիշատակություն կա Պիգա քաղաքի հայոց մեջ, որունք 1320 թվականին Ս. Անտոն անունով եկեղեցի և մի վանք են կանգնում այս քաղաքում: Պիգա քաղաքում գրված ժիրքը մեկնութեան պատարագի»-ի հիշատակարանում կարում ենք. «Եւ գրեցաւ ձեռամբ տրուպ և փողուն գրչի թորոսի արեղի Ալմբրոցոյն: Ի յամին նոյնում Տեսան մերոյ և Փրկչին ՌՅՇ և Դ (1355), յամսեանն աւգուստոսի Ժ և Դ աւարտեցաւ գիրքս ի քաղաքին, որ կոչի Պիգ, ընդ հովաննեաւ սրբոյն Անտոնի հայ տանք²⁴: Սրանով հաստատվում է ուրեմն Պիգայում հայոց Հոգհառան կամ Եկեղեցու գրյությունը, որտեղ նույնիսկ գրական աշխատանքը է կատարել վերոհիշյալ թորոս արեղան: Պիգա քաղաքում է եղել 1353—1372 թվականներին Գրիգոր անունով մի հայ արքեպիսկոպոսում²⁵, որի պաշտոնի կամ գործունեության մասին նույնպիս ոչինչ հայոնի չէ: Սրա ժամանակ Միրանդի կամ Միրանց որդի Պետրոս անունով մի հայ վաճառական և իր կինը՝ Վալբի, իրենց ամբողջ տնեցվածքը կտակում են քաղաքի մոտ մի վանքի կառուցման համար: Այս Պետրոսի հայոը 1282 թվականից ի վեր հիշված լինելով քաղաքի դիվաններում, Ալիշանը ևն թաղրում է, թե նաև այ հայ վաճառականներ եկած և հաստատված պետք է լինին Պիգայում²⁶: Եվ իսկապես, հայկական եկեղեցի կամ Հոգհառան, հայկական վանք, հայ արքեպիսկոպոս, հայերեն գրական աշխատանքի թեկուլ միայն մեկ հիշատակություն, այս բոլորը կասկածից վեր են թողնում այն, որ այս քաղաքում անպարման հայ բնակչություն պետք է եղած լինի: Զգետք է մոռանալ նաև, որ Պիգան հայկական Կիլիկիայում ունեցել է իր կոնսուլը: Պիգայի հետ պետք է հիշել նաև Ֆլորենցիան, որտեղ հայերը ժողովարի էլ առաջ հիմնել էին վանք և եկեղեցի հանուն Ս. Բարսեղի²⁷:

23 Նույն տեղում:

24 Տե՛ս Լ. Խաչիկյան, «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հատ. Ա, հիշատակարան № 488:

25 Հ. Պ. Ալիշան, «Միսական», էջ 454:

26 Նույն տեղում, էջ 450:

27 Նույն տեղում:

19 Հ. Պ. Ալիշան, «Միսական», էջ 453:

20 Մեսրոպ վրդ. Ուղուրլան, Հիշված աշխատությունում, էջ 218:

21 Նույն տեղում, էջ 229:

22 Հ. Պ. Ալիշան, «Միսական», էջ 454: